ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՎԱՅՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ, ԴԱՎԻԹ ՋԻԼՖԻՄՅԱՆ

«Իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ անձ» հասկացության իմաստը ձևական է: Ընդհանրապես, դատապարտյալին բնորոշ հատկանիշներից բացի, այն օժտված է նաև լրացուցիչ, օրենքով սահմանված հատկանիշով. հանցանքի կատարման պահին կամ դրանից առաջ այդ դատապարտյալը եղել է օրենքով սահմանված կամ իրավապահ այլ մարմնի աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագրի հիմքով աշխատող (աշխատակից):

Իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից անձանց իրավական վիճակի էական առանձնահատկությունը պայմանավորված է նաև նրանց քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) գտնվելու փաստով: Դատարանի դատավճռի ուժով նրանք հայտնվում են լրիվ նոր, բնույթով այլ իրականության՝ դատապարտյալների հանրության մեջ: Սակայն նրանք չեն դադարեցնում իրենց նախկին սոցիալական կապերը՝ շարունակելով դրանց մի մասն օրենքով երաշխավորված կարգով: Հետևաբար, իրավապահ մարմինների՝ ազատազրկման դատապարտված նախկին աշխատակիցների սոցիալական կապերը, պայմանավորված ազատազրկում պատժատեսակի բնույթով, կարող են լինել երկու տեսակ՝ ա) սոցիալական կապեր քրեակատարողական հիմնարկում, այսինքն՝ անմիջական միջավայրում, բ) սոցիալական կապեր քրեակատարողական հիմնարկից դուրս, այսինքն՝ արտաքին կապեր: Այս խմբի ազատազրկման դատապարտվածների արտաքին ու ներքին հարաբերությունների և դրանց իրավական կարգավորման հետազոտությունը հնարավորություն է տալիս վեր հանելու նշյալ անձանց՝ օրենքով սահմանված մի շարք իրավունքների կենսագործելիության աստիճանը, մշակելու դրանց բարելավման ուղղությամբ անհրաժեշտ ու համալիր միջոցառումներ: Ազատազրկման վայրում ներքին հաղորդակցության ոլորտը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ստացել է ազատազրկման վայրում դատապարտյալների միջավայր կամ սոցիալական միջավայր անվանումը: Ազատազրկման վայրերի սոցիալական միջավայրի հիմնահարցերն արդի շրջանում ենթարկված են բավականին մանրազնին ուսումնասի-

րության[1]: Դրանց մեջ որոշակի տեղ են զբաղեցնում նաև մեր աշխատությունը[2], որում քննարկման առարկա է դարձել ՀՀ ազատազրկման վայրերի միջավայրի հետ կապված մի շարք տեսական հարցեր, մասնավորապես՝ ազատությունից զրկված դատապարտյալների սոցիալական միջավայրի հասկացությունը, բնութագիրը, առանձնահատկությունները, ազատազրկման վայրերում միջխմբային, ներխմբային և միջանձնային հարաբերությունները, խմբերի տեսակները, դրանցում ձևավորված ենթամշակույթը, նորմատիվ արժեքները և այլն: Այս հետազոտության համատեքստում չենք ներառի ազատազրկման վայրերի, ներառյալ իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց սոցիալական միջավայրի տեսական հիմնահարցերը, այլ կփորձենք վեր հանել իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրի որոշ առանձնահատկություններ՝ մեր իրականացրած կրիմինասոցիոլոգիական հետազոտության[3] միջոցով՝ այդ ընթացքում հատկապես ուշադրություն դարձնելով ազատազրկման դատապարտվածների ներխմբային և միջխմբային հարաբերություններին:

Նոր միջավայրը, այդտեղ առկա պայմաններն էական հոգեբանական-զգացմունքային ազդեցություն են թողնում դատապարտյալների վրա: Նմանապես իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից անձանց զգացմունքային վիճակն էականորեն փոխվում է հենց պատիժը կրելու սկզբնական փուլում: Որպեսզի բացահայտենք, թե նոր միջավայրի որ գործոնը կամ պայմանն է առավել ազդել դատապարտյալների վրա, նրանց առաջադրվել է «*քրեակատարողական հիմնարկում հայտնվելու կապակցությամբ ի՞նչն ավելի խիստ և բացասական (զգացմունքային, հոգեբանական) ազդեցություն ունեցավ Ձեզ վրա*» հարցադրումը, որի պատասխաններն արտացոլված են թիվ 1 աղյուսակում:

---

[1] Տե՛ս, օրինակ, **Антонян Ю. М**. Социальная среда и формирование личности преступника (неблагоприятное влияние на личность в микросреде). М., 1975; **Буева Л. П.** Социальная среда и сознание личности. М., 1968; **Сычев Ю. В.** Микросреда и личность. М., 1974; **Хохряков Г. Ф.** Социальная среда и личность. М., 1982; **Мокрецов А. Н., Шмаров И. В.** Микросреда осужденных в ИТУ. М., 1979; Социально-негативные явления в ИТК и борьба с ними. М., 1984; **Щипанова Н. И., Кухтина Т. В.** Влияние социальных условий в местах лишения свободы на личность осужденного // Вестник ЮУрГУ. Серия «Право»: Проблемы и вопросы уголовного права, уголовного процесса и криминалистики, 2014, т. 14, № 4, էջ 64-67; **Конышев Ф. В.** Особенности социальной среды в местах лишения свободы и ее влияние на личность осужденного. Конференция: психология и педагогика образования будущего. Ярославль, 13 февраля-25 апреля 2017 г. Ярославль, 2017, էջ 250-253 //https://www. elibrary.ru/item.asp?id=32771445

[2] Տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы. Изд. Ереванского госун-та. Ер., 2008:

[3] Հետազոտությունն իրականացրել է Դ. Հ. Ջիլֆիմյանը 2019 թ. գարնանը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Աղյուսակ 1

Հարցադրման պատասխան	Դատապարտյալներ
ՔԿՀ-ի աշխատակցի կոպտությունը	0 %
Դատապարտյալների բացասական վերաբերմունքը	12.50 %
Բնակության անբավարար պայմանները	3.13 %
ՔՀ-ի կանոնակարգի խստությունը	62.50 %
Մեկ այլ պայման՝ նշել են սահմանափակ տարածության մեջ գտնվելը	6.25 %
Որևէ խիստ, բացասական զգացողություն չեն ունեցել	15.63 %

Տվյալները հաստատում են, որ դատապարտյալները, մնացած զրկանքների համեմատ, առավել շատ արժևորում են ազատությունը, որովհետև նրանց 68.75 %-ը բացասական հույզեր է ապրել հենց այդ պատճառով: Դատապարտյալների 15.63 %-ի շրջանում որևէ ազդեցության բացակայությունը երևի թե բացատրվում է դատապարտյալների մի մասի՝ նախկինում ազատազրկված լինելու փորձով: Կարծում ենք, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժը համապատասխանում է Բեկարիայի բնորոշմանը. «... պետք է կիրառել այնպիսի պատիժներ և դրանց օգտագործման այնպիսի եղանակներ, որոնք, լինելով համապատասխան կատարված հանցագործությանը, մարդկանց հոգիների վրա կթողնեն ամենից ուժեղ և ամենից երկարատև ազդեցությունը և հանցագործներին չեն պատճառի զգալի ֆիզիկական տանջանքներ»[4]:

Եթե դասակարգման այս խմբի դատապարտյալների պատասխանները համեմատենք ընդհանրապես ազատազրկման դատապարտվածներին առաջադրված նույն հարցադրման պատասխանների տվյալների հետ[5], ապա կտեսնենք, որ վերջիններիս 60%-ի վրա բացասական ազդեցություն են թողել «բնակության անբավարար պայմանները», դրան հակառակ՝ կանոնակարգի խստությունը նշել է ընդամենը 14 %-ը: Կանոնակարգը տվյալ պարագայում բոլոր դատապարտյալների համար նույնն է: Բայց այդ երկու պատասխանների միջև թվային տվյալների հակառակ բաշխվածությունը՝ ազատությունը և գույքակացարանային պայմանները, երևի թե բացատրվում է իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների կրթվածության ավելի բարձր մակարդակով և մյուս կողմից՝ «Վարդաշեն» ՔԿՀ-ի (նախատեսված է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների համար) կացարանային (բնակության պայմանների) ավելի բարվոք վիճակով:

Ազատազրկման վայրերում որպես կանոն ձևավորվում են դատապարտյալների ոչ ֆորմալ խմբեր[6]: Մեր իրականության մեջ տեսաբան-

---

[4] **Бекария Чезаре.** О преступлениях и наказаниях. Пятое издание, заново исправленное и увеличенное. Гарлем, DDCCLXVI. М.: Спелс, 1995, с. 88.

[5] Տե՛ս **Хачикян А. М.,** նշվ. աշխ., էջ 64:

[6] Ազատազրկման դատապարտվածների խմբեր կան նաև աշխարհի շատ երկրնե-

ները դատապարտյալների խմբերը բաժանում են դրական, բացասական, անորոշ ուղղվածության, իսկ բացասականներն իրենց հերթին՝ հակահասարակական, բայց ոչ հանցավոր և հանցավոր խմբերի[7]: Մեր կողմից 2007-2008 թթ. ազատազրկման տարբեր վայրերում իրականացված հետազոտությունների արդյունքներով՝ ընդհանրապես ազատազրկման և առաջին անգամ ազատազրկման դատապարտվածների 91.3 %-ը ընդգրկված է տարբեր ուղղվածության փոքր խմբերում, և միայն 8.7 %-ն է, որ ոչ մի խմբի մեջ ներառված չէ[8]:

Խմբերը վերցված են քրեակատարողական իրավունքի տեսության մեջ մշակված դասակարգումներից, որոնք արդեն ավանդական ու արմատավորված մոտեցումներ են[9]: Ինչպես ցույց են տալիս թվային տվյալները, իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրում ոչ ֆորմալ խմբային բաժանում գոյություն չունի, որովհետև նրանց 56.25 %-ն իրեն չի վերագրում խմբերից ոչ մեկին, իսկ 43.75 %-ը համարում է իրեն աշխատողների խմբի անդամ: ՀՀ մնացած ՔԿՀ-ներում պատկերը լրիվ այլ է[10]. այդ համապատկերում բացառություններ ու յուրահատկություններ ունի ազատազրկման դատապարտված կանանց միջավայրը[11]: Այս փաստը, կարծում ենք, ոչ թե ՔԿՀ-ի գործունեության արդ-

---

րում: Օրինակ՝ ԱՄՆ-ում դրանց թիվը հասնում է 13-ի: Դրանցից են՝ «առնետները», «խոնարհվողները», «գորիլաները», «շնագայլերը», «առևտրականները», «ձկները», «արվամոլները», «գանգստերները» և այլն (տե՛ս **Sakes G.,** «The Society of Captives. A Study of a Maximum Security Prison», Priceton: Princeton University Press, 1958, էջ 87-105):

[7] Հանցավոր ենթամշակույթի, ներառյալ բանտային հիմնահարցերի, դատապարտյալների ոչ ֆորմալ խմբերի, նրանց միջև հարաբերությունների, հետխորհրդային հասարակության վրա այդ մշակույթի ազդեցության մասին տե՛ս **Глаточкин А. Д., Пирожков В. Ф.** Психология коллектива заключенных. М., 1968, էջ 17; **Хачикян А. М.,** Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных. Ер.: Тигран Мец, 2000, էջ 72-75; **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы, էջ 81-84; **Хохряков Г. Ф.** Парадоксы тюрьмы. М., 1991, էջ 84-87, ինչպես նաև՝ **Мокрецов А. Н., Шмаров И. Б.,** նշվ. աշխ.; **Хохряков Г. Ф.** Социальная среда и личность. М., 1982; **Олейник А. Н.** Тюремная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М.: ИНФРА-М., 2001, XIV, 418 էջ; **Шакирьянов М. М.,** Преступные традиции среди осужденных в исправительных учреждениях и борьба с ними: дисс.... канд. юр. наук. Санкт-Петербург, 2004, էջ 284; **Ефимов Е. С.,** Современная тюрьма: Быт, традиции и фольклор. М., ОГИ, 2004, 398 էջ:

[8] Տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы, էջ 72:

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 84-98: Ոչ ֆորմալ խմբերի, նրանց միջև հարաբերությունների, խմբերում կիրառվող հարկադրանքի միջոցների մասին տե՛ս **Хохряков Г. Ф.,** Парадоксы тюрьмы. М., 1991, էջ 84-87:

[10] Ազատազրկման դատապարտվածների հանրության մեջ շերտավորման հետևանքով ավանդաբար ձևավորվում է երեք հիմնական շերտ (կաստա)՝ արտոնյալ դատապարտյալներ (հեղինակություններ, մերժողներ), միջին (աշխատողներ) և ոչ արտոնյալ (բարոյալքվածներ): Դրանով իսկ ձևավորվում է խմբի կարգավիճակային-դիրքորոշումային կառուցվածքը, որտեղ ամեն մի շերտի ներկայացուցիչ ունի որոշակի իրավունքներ ու պարտականություններ (տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы, էջ 84):

[11] Այդ մասին տե՛ս **Դ. Ա. Թումասյան,** Ազատազրկում պատժատեսակի կատար-

յունք է, այլ բացատրվում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալ-հոգեբանական, մասնագիտական և այլ առանձնահատկություններով, ինչի հետևանքով հանցավոր ենթամշակույթի բացասական բազմաթիվ նորմեր մասնագիտացված նման ՔԿՀ-ում չեն գործում կամ գործում են ոչ բացահայտ: Այս եզրակացությունը հաստատում են նաև իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների և ընդհանրապես դատապարտյալների կողմից միջանձնային փոխհարաբերությունների սանդղակի գնահատականները: Սակայն պետք է նկատի ունենան, որ ընդհանուր ՔԿՀ-ներում դատապարտյալների միջանձնային հարաբերությունների բնույթը տարբերակված է ըստ խմբային պատկանելության՝ որպես կանոն կախված լինելով դրական կամ բացասական խմբերում ընդգրկվածությունից: Իսկ իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների շրջանում, ինչպես նկատեցինք, խմբային բաժանում չկա:

Աղյուսակ 2

«Վարդաշեն» ՔԿՀ-ի դատապատյալների միջանձնային փոխհարաբերությունները[12]

Փոխհարաբերության բնույթը	«Վարդաշեն» ՔԿՀ-ի դատապատյալներ	Ընդհանուր ՔԿՀ-ի դատապատյալներ	
		Դրական ուղղվածությամբ խմբեր	Բացասական ուղղվածությամբ խմբեր
1. վստահող, անկեղծ	*18.75 %*	*52.7 %*	*0 %*
2. շփվող, բայց ոչ անկեղծ	*21.88 %*	*69.4 %*	*15.40 %*
3. ծածկամիտ, ինքնամփոփ, տագնապալի	*0 %*	*58.2 %*	*24.70 %*
4. կոնֆլիկտային, բայց ոչ թշնամական	*0 %*	*31 %*	*40.3 %*
5. թշնամաբար տրամադրված	*0 %*	*0 %*	*35 %*
6. չեզոք	*59.38 %*	*12 %*	*1 %*

ման առանձնահատկությունները կին դատապարտյալների նկատմամբ: Իրավ. գիտ. թեկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, 2012, էջ 17:

[12] Որպեսզի իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների և ընդհանրապես դատապարտյալների կողմից միջանձնային փոխհարաբերությունների գնահատականներն ու դրանց թվական տվյալներն առավել ակնառու լինեն, Դ. Զիլֆիմյանի 2019 թ. հետազոտության տվյալները և Հ. Խաչիկյանի՝ առաջին անգամ ազատազրկման դատապարտվածների միջանձնային փոխհարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրության տվյալները (տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных, էջ 76, 80) զետեղվել են մեկ աղյուսակում: Աղյուսակը ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ Հ. Խաչիկյանի կողմից հետազոտված տվյալները բաժանված են առանձին՝ դրական և բացասական խմբերի միջև: Բացի այդ, Հ. Խաչիկյանի արդյունքային ցուցանիշները գերազանցում են 100 %-ը, որովհետև մի հարցն ունի մի քանի հնարավոր պատասխաններ:

Ըստ աղյուսակի՝ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների մեջ «չեզոքները» կազմում են 59.38 %, իսկ «ծածկամիտ, ինքնամփոփ, տագնապալի», «կոնֆլիկտային, բայց ոչ թշնամական», «թշնամաբար տրամադրված» փոխհարաբերությունների իսպառ բացակայությունը հաստատում է, որ իրապես իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակիցների սոցիալական միջավայրում բացակայում են ավանդական ոչ ֆորմալ խմբերը:

«Վարդաշեն» ՔԿՀ-ում իրականացված ուսումնասիրության արդյունքում իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների մեջ «հեղինակություններ» կամ «հեղինակություն վայելողներ» չեն ընդգծվել: Բոլոր դատապարտյալները (100 %) նշել են, որ և՛ դրականորեն, և՛ բացասականորեն տրամադրված դատապարտյալների շրջանում իրենք չեն համարվում հեղինակություն: Սակայն այս հանգամանքը մենք հակված չենք իրական համարելու:

Անհանգստացնող է իրավապահ մարմինների՝ նախկին աշխատակից դատապարտյալների և առաջին անգամ ազատազրկման դատապարտված՝ դրական ուղղվածությամբ խմբերում ընդգրկված դատապարտյալների փոխհարաբերությունների էական տարբերությունը, հատկապես «վստահող անկեղծների» և «շփվող, բայց ոչ անկեղծների» թվային տվյալների գրեթե եռակի տարբերությունը: Ստացվում է, որ առաջին անգամ ընդհանրապես ազատազրկման դատապարտված՝ դրական ուղղվածությամբ խմբերում ընդգրկված դատապարտյալներն ավելի վստահող ու անկեղծ են, քան իրավապահ մարմինների՝ ազատազրկման դատապարտված նախկին աշխատակիցները: Նման էական տարբերությունը կարծես թե պայմանավորված է այդ դատապարտյալների նախկին աշխատանքի բնույթով: Միակ տարբերությունն այն է, որ իրավապահ մարմինների՝ ազատազրկված նախկին աշխատակիցների շրջանում չկան «ծածկամիտ, ինքնամփոփ, տագնապալի», «կոնֆլիկտային, բայց ոչ թշնամական» և «թշնամաբար տրամադրվածներ», ինչը նորից հաստատում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ՔԿՀ-ում ոչ ֆորմալ խմբերի բացակայությունը և ընդհանուր դրական փոխհարաբերությունները միջանձնային ոլորտում: Այդ է վկայում նաև «հակումը կոնֆլիկտներին» հատկանիշի ուսումնասիրությունը: Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների այդ հատկանիշի վերհանմանն ուղղված չորս տարբերակով հարցադրումներից բոլորը բացառապես ընտրել են «ոչ կոնֆլիկտային» պատասխանը (100 %)[13]: Համե-

[13] Ազատազրկման վայրերում ներխմբային, միջխմբային, անձնական կոնֆլիկտների, դրանց բնույթի հիմքում ընկած օրինաչափությունների ու գործոնների մասին ավելի մանրամասն տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уго-

մատության համար նշենք, որ ընդհանրապես ազատազրկման դատապարտվածներին որպես կանոն բնորոշ է բավականին բարձր կոնֆլիկտայնությունը[14]:

Իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների ոչ կոնֆլիկտային բնութագիրը հաստատում է նաև այլ դատապարտյալների հետ հարաբերություններից բավարարվածության աստիճանը: Հարցման ենթարկված դատապարտյալների 100 %-ը բավարարված է այդ հարաբերություններից, քանի որ չի գտնվում ահաբեկման, կողոպտման, շահագործման կամ նվաստացնող մեկ այլ վիճակում, որոնք համատարած երևույթ են ընդհանուր ՔԿՀ-ներում[15]:

Այսպիսով, «Վարդաշեն» ՔԿՀ-ում գտնվող իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների միջխմբային բաժանումների, դատապարտյալների փոխհարաբերությունների, կոնֆլիկտի նկատմամբ հակումների ուսումնասիրությունն այս խմբի դատապարտյալների տեսանկյունից և մնացած բոլոր ազատազրկվածների համապատասխան ցուցանիշների համեմատ՝ թողնում է դրական տպավորություն: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ ինքնագնահատականի չափազանցվածության և զգուշության գործոնները, որոնք կարող են որոշակիորեն ազդել թվական տվյալների օբյեկտիվության վրա: Այս եզրակացությունը հաստատվում է «Վարդաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցների և դատապարտյալների սոցիալական միջավայրի վերաբերյալ տեսակետներն ու մտածմունքները վեր հանող տվյալների վերլուծությունը:

ловно-исполнительные проблемы, էջ 92-98; **Шмаров И. В., Галкин Е. Б.** и др., Конфликты среди осужденных и профилактика правонарушении в местах лишения свободы. М., 1981; **Усс А. В.** Конфликты между осужденными, сопровождающиеся насильственными посягательствами. Красноярск. 1984; **Мокрецова А. И., Шмаров И. Б.,** նշվ. աշխ.; **Сухов А. Н.** Конфликты в первичных коллективах осужденных. Рязань, 1978 և այլն:

[14] Այսպես, ընդհանրապես ազատազրկման դատապարտված անձանց, հատկապես բացասական խմբերում բախումներն այլ դատապարտյալների հետ կազմում են 35.4 %-ը, վարչակազմի հետ՝ 10.4 %-ը, բոլորի հետ՝ 40.8 %-ը, և ոչ կոնֆլիկտային է 13.4 %-ը: Դրական խմբերում պատկերը մի փոքր այլ է բացասականի համեմատ, համապատասխանաբար՝ 19.6 %, 6 %, 7.7 %, 66.7 % (տե՛ս **Хачикян А. М.,** էջ 88): Սակայն, ինչպես տեսնում ենք, դրական խմբերին պատկանող դատապարտյալների կոնֆլիկտայնության աստիճանը բավականին բարձր է՝ ի համեմատ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների:

[15] Ավանդաբար ՔԿՀ-ներում բռնությունը, ահաբեկումը, շահագործումը և նվաստացնող վիճակները տարածված երևույթներ են (տե՛ս **Шмаров И. В., Галкин Е. Б.** и др., նշվ., աշխ.; **Усс А. В.** Конфликты между осужденными, сопровождающиеся насильственными посягательствами. Красноярск. 1984; **Мокрецова А. И., Шмаров И. Б.** Микросреда осужденных в ИТУ. М., 1979; **Сухов А. Н.** Конфликты в первичных коллективах осужденных. Рязань, 1978): ՔԿՆ-ներում դրանք չվերացան նաև հետխորհրդային շրջանում (տե՛ս **Олейник А. Н.,** նշվ. աշխ.; **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы, էջ 88, 95):

Աղյուսակ 3

«Վարդաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներին դատապարտյալների միջավայրի առավել անհանգստացնող, տագնապալի երևույթները



1. Դատապարտյալների խմբերի ազդեցության աճը, 2. հեղինակությունների ազդեցության աճը, 3. կանոնակարգի խախտումները, 4. մեկ այլ:

4-րդ՝ «մեկ այլ» տարբերակի պատասխանով աշխատակիցները նշել են, որ դատապարտյալների միջավայրում առավել անհանգստացնող և տագնապալի ուղղակի և անուղղակի ազդակներ են արտաքին աշխարհից ստացված լուրերը՝ կապված իր կամ իր ընտանիքի հետ: X տարբերակում աշխատակիցները նշել են, որ դատապարտյալների միջավայրում ավելի անհանգստացնող և տագնապալի երևույթներ չկան:

Թիվ 3 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՔԿՀ-ում այնուամենայնիվ առկա են խմբերի ձևավորման խմորումներ, աշխատակիցների 6.67 %-ը հաստատում է, որ կան հեղինակություններ, և նկատվում է դրանց ազդեցության աճ, 23.33 %-ն անհանգստացնող է գնահատում կանոնակարգի խախտումները: Պատասխանների 3-րդ և 4-րդ տարբերակներում նշված անհանգստացնող երևույթների թվաքանակի մեջ հավանաբար իրենց դերն ունեն վարչակազմի թերացումները, ինչն աշխատակիցներն ուղղակիորեն չեն նշում, սակայն այն անուղղակիորեն հասկացվում է: Այն, որ վարչակազմի թերացումներն ակնհայտ են, հաստատում է դատապարտյալների միջև հարաբերությունները բարելավելու նպատակով անհրաժեշտ քայլերի վերաբերյալ ազատազրկվածների տեսակետների վերլուծությունը (տե՛ս աղյուսակ թիվ 4):

Թվական տվյալներից ակնհայտ է, որ դատապարտյալների 53.13 %-ը, այսինքն՝ բացարձակ մեծամասնությունը (եթե հաշվի առնենք, որ 43.7 %-ը այս կամ այն պատճառներով լռում են) հարաբերությունների բարելավման ուղղությամբ թերացումներ է տեսնում վարչակազմի գործունեության մեջ: Այս տվյալների և բուն աշխատակիցների տեսակետների (տե՛ս աղյուսակ թիվ 3) համադրումը ևս մեկ անգամ հավաստում է, որ վարչակազմը դատապարտյալների սոցիալական միջավայրի առողջացման ու բարելավման ուղղությամբ բավական անելիքներ ունի, հատկապես պահանջկոտության բարձրացման, կանոնակարգի պահպանման ուղղություններով:

Աղյուսակ 4

«Վարդաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալների միջև հարաբերությունները բարելավելու համար անհրաժեշտ միջոցառումները



1. Բարձրացնել վարչակազմի պահանջկոտությունն այն դատապարտյալների նկատմամբ, որոնք ահաբեկում են մյուսներին, 2. վարչակազմի կողմից միջոցառումներ ձեռնարկել կանոնակարգի պահպանման բարելավման ուղղությամբ, 3. մեկ այլ, X տարբերակում դատապարտյալները չեն պատասխանել հարցին:

Ազատազրկման դատապարտվածների արտաքին սոցիալական կապերը պատմական-իրավական տեսանկյունից դիտարկելիս հետխորհրդային երկրներում նկատվում է ազատազրկման դատապարտվածների մի շարք իրավունքների ամրագրում, որոնք նախատեսված չէին խորհրդային օրենսդրությամբ, ինչպես նաև չափից դուրս խիստ մի շարք սահմանափակումների վերացում: Այսպես՝ ՌԴ քրեակատարողական օրենսդրության զարգացման մեկնարկային պահը այս հիմնահարցը հետազոտողները կապում են դեռևս 1992 թ. հունիսի 12-ին ընդունված օրենքի հետ, որով ընդարձակվեցին ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց շատ իրավունքներ[16]: ՌԴ 1997 թ. Քրեակատարողական օրենսգիրքը շարունակեց այդ մարդասիրական գիծը: Արդյունքում վերացվեցին իրենց դարն ապրած նամակագրության գրաքննությունը և շատ այլ սահմանափակումներ, ընդլայնվեցին թույլատրելի տեսակցությունների, ծանրոցներ, հանձնուքներ ստանալու քանակները: Դատապարտյալներին օրենսդրական ամրագրման միջոցով թույլատրվեցին ՔԿՀ-ների սահմաններից դուրս կարճաժամկետ երթևեկելու, արձակուրդի և այլ իրավունքներ[17]:

ՀՀ ՔԿՕ 92-րդ հոդվածը կարգավորում է ազատազրկման դատապարտվածի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ՝ ամրագրե-

[16] Այդ օրենքի վերտառությունն էր՝ Закон РФ от 12 июня 1992 г. «О внесении изменении и дополнении в Исправително-трудовой кодекс РСФСР, Уголовный кодекс РСФСР и Уголовно-процессуальный кодекс РСФСР»: Օրենքի մասին տե՛ս «Уголовно-исполнительное право России». М.: Издательская группа ИНФРА, М-НОРМА, 1997, էջ 330:

[17] Տե՛ս «Характеристика осужденных к лишению свободы; По материалам специальной переписи 1999 г.». Т. 2, 2001, էջ 62:

լով այդ ոլորտում դատապարտյալի մի շարք կարևոր իրավունքներ, դրանց իրականացման կարգը և պայմանները, երաշխիքները: ՀՀ ՔԿՕ-ի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՔԿՀ-ի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու համար: Այդ նպատակով ՔԿՀ-ում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավորություն:

Նոր օրենսդրության գործողության տասնվեցամյա փորձը հետաքրքիր է կիրառման տեսանկյունից հատկապես ազատազրկման դատապարտվածների բավարարվածության, ինչպես նաև այդ իրավունքներին կողմ կամ դեմ լինելու առումով: Այս ուղղությամբ վիճակը պարզելու համար ընտրել ենք ազատազրկման դատապարտվածների՝ հեռախոսային կապից օգտվելու, տեսակցություններ ունենալու իրավունքները:

«Անհրաժե՞շտ է արդյոք ՔԿՀ-ում վերացնել հեռախոսային խոսակցությունների բոլոր սահմանափակումները» հարցադրմանը պատասխանելիս ազատազրկման դատապարտվածների տեսակետները կիսվել են՝ կողմ և դեմ 50 - 50 %-ների: Հետաքրքիր է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին ուղղված՝ «*Անհրաժե՞շտ է արդյոք ՔԿՀ-ում վերացնել դատապարտյալների հեռախոսային խոսակցությունների բոլոր սահմանափակումները*» հարցի պատասխանը: Եթե ազատազրկման դատապարտվածների կեսը կողմ էր, կեսը՝ դեմ, ապա աշխատակիցների միայն 30 %-ն է դրան կողմ, իսկ 70 %-ը՝ դեմ: Կարծում ենք՝ երկու խմբերի պատասխանները վկայում են, որ այս հարցում լրիվ ազատականացումն իսկապես նպատակահարմար չէ:

Իրավապահ մարմինների՝ ազատազրկման դատապարտված նախկին աշխատակիցներին առաջադրված մեկ այլ՝ «Անհրաժե՞շտ է արդյոք քրեակատարողական հիմնարկում վերացնել տեսակցությունների քանակի և տևողության բոլոր սահմանափակումները» հարցին 68.75 %-ը պատասխանել է «այո», իսկ 31.25 %-ը՝ «ոչ»[18]: Նույն հարցադրումը՝ ուղղված ՔԿՀ-ի աշխատակիցներին, արձանագրել է հետևյալ արդյունքները. սահմանափակումների վերացմանը կողմ է 16.67 %-ը, իսկ 83.33 %-ը դեմ է արտահայտվել տեսակցությունների քանակի և տևողության սահմանափակումների վերացմանը:

ՔԿՀ-ի աշխատակիցների հարցման արդյունքների տվյալներն

[18] Տարբեր տեսակի ՔԿՀ-ներում անցկացված ընդհանուր հարցման տվյալներով՝ դատապարտյալների 62.7 %-ը ցանկանում է, որ վերացվեն տեսակցությունների քանակական սահմանափակումները: ՔԿՀ աշխատակիցներից հարցման ենթարկվածների 80 %-ը դեմ է սահմանափակումների վերացմանը (տե՛ս **Хачикян А. М.** Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы, էջ 59):

ակնհայտորեն խելամիտ են, քանի որ առանց սահմանափակման տեսակցությունները, հեռախոսային կապը, ընդարձակ այլ իրավունքները կարող են խաթարել ՔԿՀ-ի սոցիալական առաքելությունը, հետևաբար սահմանափակումները խելամտության շրջանակներում անհրաժեշտ են: Այս եզրակացությունը հաստատում է հենց սահմանափակումների վերացման վերաբերյալ դատապարտյալների 31.25 %-ի «ոչ» պատասխանը: Այս հարցում պետք է նկատի ունենալ, որ ազատազրկման դատապարտվածների շրջանում տեսակցությունների իրավունքի իրացման աստիճանն աչքի չի ընկնում բարձր ինտենսիվությամբ: Ընդհանուր առմամբ նկատվում է տեսակցությունների քանակի տարեցտարի նվազման միտում, ինչը բացատրվում է հաղորդակցման միջոցների թանկությամբ և դատապարտյալների ընտանիքների նյութական դրության վատթարացմամբ: Կարծում ենք՝ բերված տվյալները վկայում են, որ տեսակցությունների սահմանափակումների վերացման ենթադրյալ ցանկությունն ամբոխավարական է, ինչը չի կարելի թույլ տալ:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ՔԿՕ-ում 2018-19 թթ. կատարված փոփոխությունների շնորհիվ ընդլայնվեցին տեսակցությունների տեսակները և քանակը: Ցմահ ազատազրկման դատապարտվածների և առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվածների համար նախկինում տարեկան մեկ երկարատև և երեք կարճատև տեսակցությունների փոխարեն տարեկան սահմանվել են երկու երկարատև և վեց կարճատև տեսակցություններ: Դատապարտյալներին տրվեց նաև տեսակապից օգտվելու իրավունք:

Իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրի, հատկապես նրանց ներխմբային և միջխմբային հարաբերությունների կրիմինասոցիոլոգիական հետազոտությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ՝

1. Իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալները, հայտնվելով ՔԿՀ-ում, առավել ծանր են տանում ազատության կորուստը, իսկ ընդհանրապես ազատազրկման դատապարտվածների վրա առավել բացասական են ազդում գույքակացարանային պայմանները: Տարբերության պատճառը, թերևս, իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների կրթական ավելի բարձր մակարդակն է, ինչպես նաև «Վարդաշեն» ՔԿՀ-ի կացարանային (բնակության պայմանների) առավել բարվոք վիճակը:

2. Իրավապահ մարմինների՝ ազատությունից զրկված նախկին աշխատակից դատապարտյալների սոցիալական միջավայրում, ի տարբերություն այլ ՔԿՀ-ի, խմբային բաժանում և հեղինակություններ գրեթե գոյություն չունեն, հանցավոր ենթամշակույթի բացասական բազմաթիվ նորմեր այս մասնագիտացված ՔԿՀ-ում չեն գործում: Դրա պատճառը նշված խմբի դատապարտյալների սոցիալ-հոգեբանական,

մասնագիտական և այլ առանձնահատկություններն են, մասամբ նաև՝ ՔԿՀ-ի գործունեությունը:

3. Իրավապահ մարմինների՝ ազատազրկման դատապարտված նախկին աշխատակիցների միջանձնային հարաբերությունների ոլորտում էական տարբերիչ հատկությունն է դատապարտյալների «վստահող անկեղծների» և «շփվող, բայց ոչ անկեղծների» թվի գրեթե եռակի գերազանցումը այլ ՔԿՀ-ների համեմատությամբ: Այդ էական տարբերության հավանական պատճառը դատապարտյալների նախկին աշխատանքի բնույթն է: Իրավապահ մարմինների՝ ազատազրկված նախկին աշխատակիցների շրջանում չկան «ծածկամիտ, ինքնամփոփ, տագնապալի», «կոնֆլիկտային, բայց ոչ թշնամական» և «թշնամաբար տրամադրվածները», ինչը հաստատում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների ոչ ձևական խմբերի բացակայությունը ՔԿՀ-ում և ընդհանուր դրական փոխհարաբերությունները միջանձնային ոլորտում:

4. Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներն աչքի են ընկնում նաև կոնֆլիկտայնության բավականին ցածր մակարդակով: Այդ բնութագիրը հաստատվում է նաև այլ դատապարտյալների հետ հարաբերություններից բավարարվածության աստիճանով, արդյունքում դատապարտյալներն այստեղ ահաբեկման, կողոպտման, շահագործման կամ նվաստացնող մեկ այլ վիճակում չեն, որոնք համատարած են ընդհանուր ՔԿՀ-ներում:

5. Իրավապահ մարմինների՝ ազատազրկման դատապարտված նախկին աշխատակիցների սոցիալական միջավայրի վերաբերյալ տեսակետներին ու ինքնագնահատականներին պետք է վերաբերվել զգուշությամբ: Տվյալները ցույց են տալիս, որ «Վարդաշեն» ՔԿՀ-ում այնուամենայնիվ առկա են խմբերի ձևավորման խմորումներ, առաջ են գալիս հեղինակություններ, և նկատվում է դրանց ազդեցության աճ: Նման և այլ անհանգստացնող երևույթների պատճառը վարչակազմի թերացումներ են, ինչն աշխատակիցներն ուղղակիորեն չեն նշում, սակայն այն անուղղակիորեն հասկացվում է: Թվական տվյալներից ակնհայտ է նաև, որ դատապարտյալների սոցիալական միջավայրի առողջացման ու բարելավման ուղղությամբ վարչակազմը բավական անելիքներ ունի՝ հատկապես պահանջկոտության բարձրացման, կանոնակարգի պահպանման բարելավման ուղղություններով:

6. Քրեակատարողական հիմնարկում հեռախոսային խոսակցությունների, տեսակցությունների քանակի և տևողության բոլոր սահմանափակումների վերացման առաջարկության նկատմամբ աշխատակիցների մոտեցումները ավելի խելամիտ են, քանի որ այդ իրավունքների առանց սահմանափակման իրացումը կարող է խաթարել քրեակատարողական հիմնարկի սոցիալական առաքելությունը: Սահմանափակումներն անհրաժեշտ են խելամտության սահմանում:

Բանալի բառեր – *սոցիալական միջավայր, կրիմինասոցիոլոգիական հետազոտություն, իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալ, սոցիալական կապերը քրեակատարողական հիմնարկում, «Վարդաշեն» ՔԿՀ, դատապարտյալների ոչ ֆորմալ խմբեր*

АРУТЮН ХАЧИКЯН, ДАВИД ЗИЛФИМЯН – ***Среда в уголовно-исполнительных учреждениях и внешние социальные связи бывших сотрудников правоохранительных органов, осуждённых к лишению свободы.*** – В статье представлена сфера внутреннего общения бывших сотрудников правоохранительных органов, которая именуется социальной средой осуждённых в местах лишения свободы, а также рассмотрены их социальные связи вне данных мест. На основе исследования, проведённого авторами, предметом обсуждения в статье стали специфические особенности социальной среды в местах заключения РА, причём особое внимание уделено меж- и внутригрупповым отношениям.

Ключевые слова: *социальная среда, криминосоциологическое исследование, осужденный бывший сотрудник правоохранительных органов, социальные связи в уголовно-исполнительном учреждении, уголовно-исполнительное учреждение «Вардашен», неформальные группы осужденных*

HARUTYUN KHACHIKYAN, DAVIT ZILFIMYAN – ***Environment in Penitentiary Institutions and External Social Relations of Former Officers of Law Enforcement Bodies Sentenced to Imprisonment.*** –The sphere of internal communication of former officers of law enforcement bodies sentenced to imprisonment are discussed in the article presented. In the theory of penitentiary law the latter one is known as the social environment of the convicts in the places of detention. The issues of their social relations in a penitentiary institution, i.e., in immediate environment, ane their social relations out of a penitentiary institution, i.e., external relations are examined as well. On the basis of the crimino-sociological survey carried out by the authors some specific features of the social environment in penitentiary institutions of RA are also discussed emphasizing intra-group and inter-group relations.

Key words: *social environment, crimino-sociological survey, convicted former officer of law enforcement bodies, social relations in penitentiary institution, "Vardashen" penitentiary institution, informal groups of convicts*

Ներկայացվել է՝ 14.09.2020,
Գրախոսվել է՝ 30.11.2020,
Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020